



Կալիֆոռնիա նահանգի Վճարովի ընտանեկան արձակուրդի մասին

Աշխատող կալիֆոռնիացիներից շատերի դեպքում իրենց սիրելի հետ լինելու համար ժամանակ գտնելը, երբ նրանք այդ ժամանակի կարիքն ամենից շատ ունեն, կարող է դժվարություն ներկայացնել: Կալիֆոռնիա նահանգի Վճարովի ընտանեկան արձակուրդի ծրագիրը ստեղծվել է այդ կարևոր պահերի համար. երբ կապվում եք նոր երեխայի հետ կամ խնամում եք ընտանիքի ծանր հիվանդ անդամին:

Արագ փաստեր Կալիֆոռնիա նահանգի Վճարովի ընտանեկան արձակուրդի մասին

- Տրամադրում է մինչև վեց շաբաթվա աշխատավարձի մասնակի փոխհատուցման նպաստներ՝ նոր երեխայի հետ կապվելու (ըստ ծննդյան, որդեգրման կամ հովանավորյալ խնամքի հանձնելու) կամ ընտանիքի ծանր հիվանդ անդամին (երեխային, ծնողին, կնոջ կամ ամուսնու ծնողին, տատիկին կամ պապիկին, թոռանը, քրոջը կամ եղբորը, ամուսնուն կամ գրանցված քաղաքացիական զուգընկերոջը) խնամելու համար:
- Չի պահանջվում ամբողջը միանգամից վերցնել:
- Արձակուրդի ընթացքում տրամադրում է աշխատավարձի մոտավորապես 60-ից 70 տոկոսը:
- Ֆինանսավորվում է ձեր հաշմանդամության պետական ապահովագրության հարկերի պահումների հաշվին, ուստի շատ հավանական է, որ իրավունակ լինեք, եթե վերջին 5-18 ամիսների ընթացքում մուծումներ եք կատարել հաշմանդամության պետական ապահովագրությանը (աշխատավարձի վճարման անդորրագրերում նշվում է "CASDI") կամ համապատասխան կամավորական ծրագրին:
- Կապվածության հայցերը կարելի է օգտագործել երեխայի՝ ընտանիք մուտք գործելուց հետո առաջին 12 ամիսների ընթացքում ցանկացած ժամանակ:

CALIFORNIA PAID FAMILY LEAVE

moments matter.

Դա օրենք է Կալիֆոռնիայում:

Վճարովի ընտանեկան արձակուրդի նպաստներ. Կալիֆոռնիացիներին տալիս է այն ժամանակը, որն անհրաժեշտ է կարևոր պահերին տեղում լինելու համար:

Անգլերեն	1-877-238-4373
Իսպաներեն	1-877-379-3819
Կանտոներեն	1-866-692-5595
Վիետնամերեն	1-866-692-5596
Հայերեն	1-866-627-1567
Փենջաբերեն	1-866-627-1568
Թագալոգ	1-866-627-1569
Հեռատիպ (TTY)	1-800-445-1312

Անհատները կարող են այցելել նաև Վճարովի ընտանեկան արձակուրդի կամ Հաշմանդամության ապահովագրության գրասենյակ՝ հայցի ձևաթղթերը ձեռք բերելու, տեղեկատվություն ստանալու կամ ներկայացուցչի հետ խոսելու համար: Գրասենյակի գտնվելու վայրը պարզելու համար այցելեք edd.ca.gov/Disability/Contact_SDI.htm կայքէջը:



Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ CaliforniaPaidFamilyLeave.com

EDD-ն հավասար հնարավորություններ ընձեռող գործատու-ծրագիր է: Ըստ պահանջի՝ օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անհատներին: Պահանջի դեպքում, լրացուցիչ աջակցություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անձանց համար: Ծառայությունների, օգնության և (կամ) այլընտրանքային ձևաչափերի վերաբերյալ հարցումները պետք է կատարվեն 1-866-490-8879 (ձայնային) համարով զանգահարելու միջոցով: TTY օգտագործողներին խնդրում ենք զանգահարել Կալիֆոռնիայի Կոմյունատորային ծառայության (California Relay Service) 711 համարով:



ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱԸԱՆԳԻ ՎՃԱՐՈՎԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ

Օգնում է կալիֆոռնիացիներին՝ ներկա լինելու կարևոր պահերին:



Արդյո՞ք ես իրավունք ունեմ օգտվելու Կալիֆոռնիա նահանգի Վճարովի ընտանեկան արձակուրդից:

Վճարովի ընտանեկան արձակուրդի նպաստներ ստանալու իրավունք ունենալու համար պետք է բավարարեք հետևյալ պահանջները.

- արտարձակուրդ վերցնեք, որպեսզի խնամեք ընտանիքի ծանր հիվանդ անդամին կամ կապվեք նոր երեխայի հետ.
- ապահովագրված լինեք հաշմանդամության պետական ապահովագրությամբ (State Disability Insurance) (կամ կամավոր ծրագրով՝ հաշմանդամության պետական ապահովագրության փոխարեն).
- վերջին 5-18 ամիսների ընթացքում վաստակած լինեք առնվազն \$300.
- ձեր հայրը ներկայացնեք ոչ ուշ, քան ընտանեկան արձակուրդը սկսելուց 41 օր հետո: Հայրը մի ներկայացրեք նախքան արձակուրդի առաջին օրը:

Եթե ձեր գործատուն պահանջի, պետք է օգտագործեք առավելագույնը երկշաբաթյա չօգտագործված արձակուրդ կամ վճարովի արտարձակուրդ: Գործատուի պահանջները ճշտելու համար դիմեք կադրերի բաժին:

Ինչպե՞ս են հաշվարկվում նպաստների գումարները:

Կալիֆոռնիա նահանգի Վճարովի ընտանեկան արձակուրդը տրամադրում է ձեր շաբաթական աշխատավարձի մոտավորապես 60-70 տոկոսը (շաբաթական \$50-ից մինչև \$1,216):

Նպաստի գումարը հաշվարկվում է նախքան հայցի մեկնարկը վերջին 5-18 ամիսների ընթացքում ամենաբարձր եռամսյակային վաստակի հիման վրա: Զբաղվածության զարգացման վարչությունը (Employment Development Department) edd.ca.gov/PFL_Calculator կայքէջում ունի առցանց հաշվիչ, որն օգնում է գնահատել շաբաթական նպաստի գումարը:



Վճարովի ընտանեկան արձակուրդն ապահովում է աշխատատեղի պահպանում:

Կալիֆոռնիա նահանգի Վճարովի ընտանեկան արձակուրդը չի ապահովում աշխատատեղի պահպանում կամ աշխատանքի վերադառնալու իրավունք: Սակայն աշխատատեղի պահպանումը կարող է ապահովվել այլ օրենքների կրճանակներում, ինչպիսիք են «Ընտանեկան պայմանների և առողջական վիճակի համար տրվող արձակուրդի մասին» (Family and Medical Leave Act) դաշնային օրենքը, Կալիֆոռնիա նահանգի «Ընտանեկան իրավունքների մասին» օրենքը (California Family Rights Act) կամ «Նոր ծնողի արձակուրդի մասին» օրենքը (New Parent Leave Act) (եթե դրանք ձեզ վերաբերում են): Գործատուին տեղեկացրեք արձակուրդ վերցնելու ձեր մտադրության և պատճառի մասին՝ ըստ ընկերությունում սահմանված կարգի:

Ինչպե՞ս դիմել նպաստների համար:

Դիմեք Վճարովի ընտանեկան արձակուրդի նպաստներ ստանալու համար՝ օգտվելով SDI Online ծառայությունից: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք edd.ca.gov/SDI_Online կայքէջը:

Դիմել կարող եք նաև տպագիր ձևաթղթով: Այցելեք edd.ca.gov/Forms, որպեսզի պահանջեք *Claim for Paid Family Leave (PFL) Benefits, DE 2501F*, (Վճարովի ընտանեկան արձակուրդի նպաստների համար ներկայացվող հայց) ձևը:

Խնամատարության հայցերի դեպքում պետք է ներկայացնեք բժշկական տեղեկանք, ըստ որի՝ խնամառուի առողջական վիճակը ծանր է, և նա ձեր խնամքի կարիքն ունի: Այն պետք է լրացնի խնամառուի բժիշկը կամ թերապևտը: Խնամառուի մասին տեղեկությունները և նրա ստորագրությունը նույնպես պարտադիր են:

Կապվածության հայցերի դեպքում պետք է տրամադրեք փաստաթուղթ, որն ապացուցում է կապը ձեր և երեխայի միջև (օրինակ՝ երեխայի ծննդյան վկայականի, որդեգրման հանձնելու համաձայնագրի կամ հովանավորյալ խնամքի հանձնելու արձանագրության պատճենը):

Եթե ներկայումս հաշմանդամության ապահովագրության նպաստներ եք ստանում հղիության կապակցությամբ, ապա Վճարովի ընտանեկան արձակուրդի հայցի ձևաթուղթը պահանջելու անհրաժեշտություն չկա: Կապվածության հայց ներկայացնելու ձևը կուղարկվի ձեր SDI Online հաշվի միջոցով կամ էլեկտրոնային փոստով, երբ ավարտվի ձեր հղիության հետ կապված անաշխատունակության ապահովագրության հայցը:

Եթե ապահովագրված եք կամավոր ծրագրի շրջանակներում, դիմեք ձեր գործատուին, որպեսզի ձեր ապահովագրության մասին տեղեկատվություն և նպաստների համար դիմելու կարգի վերաբերյալ ցուցումներ ստանաք:

Եթե ձեր հայրը մերժվի, իրավունք ունե՞ք՝

- իմանալու մերժման պատճառը.
- բողոքարկելու նպաստներ ստանալու ձեր իրավունակության վերաբերյալ որոշումները: Այցելեք edd.ca.gov/Disability/Appeals.htm, որպեսզի տեղեկատվություն ստանաք բողոքարկումների վերաբերյալ:

Հայցում պարունակվող բոլոր տեղեկությունները գաղտնի են, բացի օրենքով թույլատրված դեպքերից: